

պզգային քաղցրահնչիւն երգասացութեամբ արձակեցան հանդիսականները :

— Ըմոյս 22 ին , Հայաստանեայց կաթողիկէ եկեղեցւոյ ազգային հանդիսաւոր Տօնին , Ըմեն . Սրբազան Պատրիարքը իրենին պատարագ մատուցանելով՝ Ձեռնադրութեւն Սուրբ խորհուրդ կատարեց , որով և վարդապետութեւն կամ կուսակրօն քահանայութեան ատորձան շնորհեց Պ . Գարեգին Սուրբատեանցին և դպիր Գեորգ Գրիգորեանին , առաջնոյն անունը փոխելով Սեղբիսեդեկ եւ երկրորդինը՝ Սակար :

— Եկեղեցեմի Օննդեան այրի ինդիրը տակաւին նոյն անորոշ վիճակի մէջ է , ինչպէս Սիօնի նախընթաց թուով ծանուցած ենք :

— Էջեքսանդրիոյ և Լիֆոքայ Յուսայ Պատրիարքները քաղաքս ժամանեցին Ինչպէս կ'երեւի յիշեալ Պատրիարքաց գալուտեան նպատակը լոկ ուխտաւորութիւն չէ , այլ նպատակ ունին Լրուսաղէմի պատրիարքի հետ խորհրդակցելու ինչ ինչ եկեղեցական խնդրոց վրայ , որոց մէջ յայտնի է մաւնաւանդ յունադասն Սարոնիներու խնդիրը , որոնք սկսած են արդէն բռնորոշ յունական եկեղեցւոյ վարչութեան դէմ , որ փոխանակ իրենց մէջէն և իրենց լեզուն հասկացող մարդիկ առաջնորդ կարգելու , ինչպէս առաջ , այնպիսի անձինք կարգած է , որք բոլորովին խորթ կ'երեւին Սարոնիներուն : Ընայժմ տակաւին չեն ղեկանիր (ոյնք)՝ Սարոնիներու բողոքը լսելու և գործադրելու , բայց տեսնենք թէ պատրիարքական խորհուրդը ինչ պիտի անօրինէ :

— Երկայ ամսոյս մէջ քանի մի գողութիւններ եղան քաղաքիս մէջ և կրպակներ կողոպտուեցան , բայց կա-

ռաժարութիւնը այնպիսի աշարուրջ և խիստ միջոցներ ձեռք առաւ , որ կարճ ժամանակի մէջ թէ գողերը բռնուեցան և թէ ապահովութիւնը տիրեց քաղաքի մէջ :

ՔԱՌԵՐ ՆԱԼԻԻՔ

(Հարունակութիւն , տես թիւ 4) :

22 . Գիւղացի մի իւր դրացւոյն տունը գնաց անոր էջը փոխ ուղեւոր համար , դրացին որ կամք չունէր տալու , պատասխան տուաւ անոր ըսելով , շատ կը ցաւիմ որ քիչ մի յառաջ չի խնդրեցիր , որովհետեւ ուրիշ մի փոխ տուած եմ : Ինքը գինքը անանկ ծատագովելու տանն , էջը զուաց . ոհ , ըսաւ գիւղացին , ահաւասիկ քու էջդ կը հաստատեւ ուրիշ մի տալը , շատակ խոստովանիլ պէտք է որ շատ բարեւորար ես : Օրսմանալն մարդ մ'ես , պէտտասխան տուաւ գիւղացին , ինձմէ աւելի իշուն կը հաւատաս :

23 . Փոքրիկ տղայ մի օր մի սեղանի վրայ միս ուղեւոր , հայրը ըսաւ անոր , միս ուղեւոր քեզ չվայելէր , այլ պէտք է որ համբերես մինչեւ որ տան : Լախ խեղճ տղան տեսնելով որ ամեն ալ կուտէին և իրեն բան մի չէին տար , ըսաւ իւր հօրը , հայր իմ , թէ որ կը բարեհաճիք ինձ քիչ մի աղ տուէք : Ինչ պիտի ընես , հայրը հարցուց անոր , ինձի տալիք մոյն հետ ուտելու համար , պատասխանեց տղան , Հայր տեսաւ որ փոքրիկ տղան մոռցուած էր , առանց ուղեւոր մտէն տուաւ անոր :

(Պիտի շարունակուի) :